ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 01_____

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «__01__» __փետրվարի_____ 2019..թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան, ի դեմս ակադեմիայի նախագահ Ռ.Մարտիրոսյանի (այսուհետ՝ պատվիրատու), որը գործում է ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից,և ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանը-ը, ի դեմս

(կազմակերպության անվանումը)

տնօրեն (ռեկտոր) _Նունե Շահումյան__ -ի (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է

(անուն ազգանուն)

Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «__Գրադարանային ծառայություն__» ծրագրի

(ծրագրի անվանումը)

(այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված ____147107.5/Մեկ հարյուր քառասունյոթ միլիոն հարյուր յոթ հազար հինգ հարյուր__ ՀՀ դրամ գումար, ներառյալ՝ ավելացված

(թվերով և բառերով)

արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ), իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ Միջոցառում) կատարման փուլերի ժամկետները որոշվում են առաջադրանքով և օրացուցային պլանով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ- ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ -ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել արտաքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ-ի

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել նախագահության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ նախագահությանը,

2.4.6 ՀՀ ԳԱԱ նախագահությանը ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ թույլատրելի չափով շեղումների դեպքում նախագահություն ներկայացնել հիմնավորում, ապա՝ կնքել համաձայնագիր,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ նախագահության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Նախագահություն ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Նախագահության հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է __147107.5/մեկ հարյուր քառասունյոթ միլիոն հարյուր յոթ հազար հինգ հարյուր__ ՀՀ դրամ,

(գրերով և թվերով)

4.1 Նախագահությունը ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է Նախագահության կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 Նախագահությունը Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Նախագահությունը Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 27983.6, 2-րդ եռամսյակում՝ 35710.7, 3-րդ եռամսյակում35886.9, 4-րդ եռամսյակում՝ 47526.3 հազար ՀՀ դրամ:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախագահությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և

երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են.

9.2.1 Կազմակերպության կողմից Նախագահություն ներկայացված Ծրագրի հայտ,

9.2.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրություն (Հավելված 1),

9.2.3 Նախահաշիվ (Հավելված 4),

9.2.4 Տնտեսական և այլ ծախսեր (Հավելված 5),

9.2.5 Հաստիքացուցակ :

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԳԱԱ նախագահություն

ք. Երևան, պ.Մարշալ Բաղրամյան 24

ՀՀ ֆին.նախ գործառ.վարչութ.
հ/հ900011024115

ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտ. Գրադարան ՊՈԱԿ

ք._Երևան պ.Մարշալ Բաղրամյան_24/6

ՀՀ ֆին.նախ գործառ.վարչութ.
հ/հ900018005448

Նախագահ՝ _____
(ստորագրություն)

Ռ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կ.Տ.

Տնօրեն (ռեկտոր)՝ _____
(ստորագրություն)

Նունե Շահունյան
(անուն, ազգանուն)

Կ. Տ.

Հավելված 1
«__01___» ____02_____ 2019.. թ.
N _01_____ պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

«_____Գրադարանային ծառայություն_____» ծրագրի
(ծրագրի անվանումը)

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ-ի նախագահ Ռ.Մարտիրոսյանը և Կազմակերպության տնօրեն (ռեկտոր) _____Նունե Շահումյանը_____ը,
(անուն, ազգանուն)

վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «01_» ___02__ 2019.. թ. N ___1_____ պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ _147107.5/Մեկ հարյուր քառասունյոթ միլիոն հարյուր յոթ հազար հինգ հարյուր __ ՀՀ դրամ գումարի չափով,
(թվերով և բառերով)

ներառյալ՝ ԱԱՀ:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ	Կազմակերպություն
Նախագահ՝ _____ *(ստորագրություն)*	Տնօրեն (ռեկտոր)՝ _____ *(ստորագրություն)*
Ռաֆիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	__Նունե Շահումյան_____ *(անուն, ազգանուն)*

Հավելված 4
«___01__» ___02_____ 2019.. թ.
N 1_____ պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«__ _Գրադարանային ծառայություն_____» ծրագրի
(ծրագրի անվանումը)

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	113032.0	*21498.7*	*48931.6*	*76409.6*	*113032.0*
2	տնտեսական և այլ ծախսեր*	9557.6	*1817.9*	*4137.5*	*6460.9*	*9557.6*
Ընդամենը (առանց ԱԱՀ)		*122589.6*	*23316.6*	*53069.0*	*82870.6*	*122589.6*
ԱԱՀ		*24517.9*	*4667.1*	*10625.3*	*16710.6*	*24517.9*
ԸՆԴԱՄԵՆԸ		147107.5	27983.6	63694.3	99581.2	147107.5

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (__Ն.Շահումյան_____)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (__Ս.Հակոբյան_____)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

Հավելված 5
«_01____» _____02_____ 2019.. թ.
N ____01____ պայմանագրի

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ՝

«_____» ծրագրի
(ծրագրի անվանումը)

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	7705.6
	էլեկտրաէներգիայի ծառայություն	*2800.0*
	գազի ծառայություն	*3000.0*
	ջրամատակարարման ծառայություն	*350.0*
	կապի ծառայություն	*1230.0*
	աղբահանություն	*325.6*
2	Գույք	600.0
3	Սարքեր և սարքավորումներ	-
4	Շրջակա միջավայրի պահպանություններ	152.0
5	Գործուղումներ	-
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	-
7	Արշավախմբեր	
8	Գրականության ձեռքբերում	980.0
Ընդամենը		9557.6

Կազմակերպության տնօրեն՝ _____ (__Ն.Շահումյան_____)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության
գլխավոր հաշվապահ՝ _____ (__Ս.Հակոբյան_____)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

2019-թ.բյուջետային ծախսերի նախահաշիվ
ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտ. գրադարան
ՊՈԱԿ

N	Ծախսերի անվանումը	2019թ ֆինանսա-կան ծավալ	1-ին եռ	1-ին կիսամ-յակ	9 ամիս	12ամիս
	Ընդամենը եկամուտներ	147107.5	27983.6	63694.3	99581.2	147107.5
1	Ծրագիր-բ.- 08,խ.-02,դ.-01					
Բ	Ընդամենը ծախսեր	147107.5	27983.6	63694.3	99581.2	147107.5
Բ1	Ընթացիկ ծախսեր	122589.6	23316.5	53069.0	82870.6	122589.6
	այդ թվում՝					
1	ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐ	113032.0	21498.7	48931.6	76409.6	113032.0
3	ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ	9557.6	1817.9	4137.5	6460.9	9557.6
	այդ թվում՝					
-	էլեկտրաէներգիայի դիմաց վճարումներ	2800.0	532.6	1212.1	1892.8	2800.0
-	Վառելիքի և ջեռուցման դիմաց վճարումներ	3000.0	570.6	1298.7	2028.0	3000.0
	Ջրմուղ-կոյուղի	350.0	66.6	151.5	236.6	350.0
	Այլ կոմունալ ծառայությունների դիմաց վճարներա/թ	445.6	84.8	192.9	301.2	445.6
	Աղբահանություն	325.6	61.9	141.0	220.1	325.6
	Դեռատիզացիա	120.0	22.8	51.9	81.1	120.0
	Կապի ծառայությունների դիմաց վճարներա/թ	1230.0	233.9	532.5	831.5	1230.0
	Քաղաքային,ինտերնետ	500.0	95.1	216.5	338.0	500.0
	Փոստային ծառայություններ	230.0	43.7	99.6	155.5	230.0
	Այլ վճարներ/բաժանորդագրություն/	500.0	95.1	216.5	338.0	500.0
	Նյութեր,ապրանքներքներ ա/թ	752.0	143.0	325.5	508.4	752.0
	Գրասենյակային նյութեր	600.0	114.1	259.7	405.6	600.0
	Շրջակա միջավայրի պաշտպ.նյութ.	152.0	28.9	65.8	102.8	152.0
	Այլ ծախսեր/ա/թ. գրականության ձեռքբերում/	980.0	186.4	424.2	662.5	980.0
4	Այլ ակտիվների ձեռք բերման ծախսեր, այդ թվում					
	Կապիտալ ծախսեր /շենքի վերանորոգում/					
5	Հարկեր ,պարտ.վճարներ ա/թ.ԱԱՀ	24517.9	4667.1	10625.3	16710.6	24517.9

Տնօրեն՝ / Ն.Շահումյան/

Գլխ.հաշվ. / Ս.Յակոբյան/

ՏՆՕՐԵՆ Ն.ՇԱՀՈՒՄՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՊՈԱԿ

2019թ. ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿ

	Պաշտոն	գիտ. աստիճան	հաստիք.միավ.	աշխատավարձ	Ընդամենը
	ՎԱՐՉԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
1	Տնօրեն		1	240000	240000
2	Գիտ,գծով ղեկավար		1	240000	240000
3	Գլխ.հաշվապահ-պլան.		1	220000	220000
4	Տնտ.մասի ղեկավար		1	200000	200000
5	Գիտ/քարտուղար.		1	190000	190000
6	Գանձապահ-հաշվ.		1	170000	170000
7	Կադրեր.տեսուչ- քարտ.		1	155000	155000
8	Համակ.օպերատոր.		1	112000	112000
			8		1527000
	ՀԱՄԱԼՐՄԱՆ ԲԱԺԻՆ				
9	Բաժնի վարիչ		1	141000	141000
10	Ենթ.վ.բաժ.վար. տեղ.		1	118000	118000
11	Առաջատար գրադ.		1	116000	116000
12	Ենթաբաժնի վարիչ		1	109000	109000
13	Առաջատար գրադ.		1	108000	108000
14	1կ.գրադարանավար		1	101000	101000
			6		693000
	ՄՇԱԿՄԱՆ ԲԱԺԻՆ				
15	Բաժնի վարիչ		1	141000	141000
16	Գլխավոր մասնագետ		1	141000	141000
17	Բաժ.վար.տեղ.		1	118000	118000
18	Ենթաբաժ.վարիչ		1	111000	111000
19	Առաջատար գրադ.		3	116000	348000
20	Առաջատար գրադ.		1	106000	106000
21	1կ.գրադարանավար		1	112000	112000
22	2կ.գրադարանավար		1	101000	101000
23	Գրադարանավար		1	91000	91000
			11		1269000
	ԳՐԱՊԱՀՈՑ				
24	Բաժնի վարիչ		1	142000	142000
25	Ենթ.վ.բաժ.վար.տեղ.		1	118000	118000
26	Ենթաբաժ.վար.		1	113000	113000

27	Առաջատար գրադ.		3	109000	327000
28	1կ.գրադ.		3	106000	318000
29	2կ.Գրադ.		2	101000	202000
30	Գրադարանավար		1	91000	91000
31	Գրքատար-գրադ.		1	95000	95000
32	Փոշի մաքրող		1	93000	93000
			14		1499000
	ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺԻՆ				
33	Բաժնի վարիչ		1	141000	141000
34	Բաժ.վար.տեղ.		1	116000	116000
35	Ենթաբաժ.վար.		1	111000	111000
36	Առաջատար գրադ.		1	116000	116000
37	1կ. գրադ.		1	106000	106000
38	1կ. գրադ.		1	101000	101000
39	Գրադարանավար		2	96000	192000
40	Գրադարանավար		1	94000	94000
			9		977000
	ԳԻՏ.ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹ.ԲԱԺ.				
41	Բաժնի վարիչ		1	147000	147000
42	Ենթաբաժ.վար.		1	116000	116000
43	1կ.գրադ.		1	106000	106000
44	1կ.գրադ.		1	94000	94000
45	Գրադ.		1	95000	95000
	Թվայնացման ենթաբաժ.				0
46	Թվայնաց.կոորդ.բ.վ.տ,		1	141000	141000
47	Առաջ. գրադ.		2	116000	232000
48	1կ.գրադ.		1	106000	106000
49	Գրադ.		1	90000	90000
			10		1127000
	ԱՎՏՈՄԱՏԱՑՄ.և ԷԼ.ՍՊԱՍ.				0
50	Բաժնի վարիչ		1	223000	223000
51	Բաժ.վար.տեղ.		1	118000	118000
52	Ինժ.ծրագրավորող		3	116000	348000
53	Ինժ.ծրագրավորող		1	106000	106000
54	Վեբ -դիզայներ		2	116000	232000
55	Գրադարանավար		1	95000	95000
56	Գրադարանավար		1	90000	90000
			10		1212000
	ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽ. և ԿՐՏՍ.ՍՊ.բաժ.				
57	Տեխնիկ վերելակ.		1	101000	101000
58	Վերելակի մեխ.		1	76000	76000
59	Առաջատար մասնագետ		1	75000	75000
60	Կազմարար		1	91000	91000
61	Գիշ.պահակ		2	81000	162000
62	Հավաքարար		2	74000	148000
63	Հավաքարար գրապ.		1	76000	76000

64	Հավաքարար		1	75000	75000
65	էլեկտրոտեխն.		1	81000	81000
66	Հավաքարար		1	90000	90000
67	Ցերեկ.պահակ		1	77000	77000
68	Սանտեխնիկ 0.75		1	63400	63400
			14		1115400
	Ընդամենը		82		9419400

ԳԼԽ.ՀԱՇՎԱՊԱՀ / Ս. Հակոբյան /

ԿԱԴՐԵՐԻ ՏԵՍՈՒՉ / Մ. Ավետիսյան /